

րիշ հիւանդների նախապէս առնուած և պահուած նոյն տեսակի մանրէները (stock-vaccines):

Պատուաստները կարելի է գործածել բուժելու կամ հիւանդութեան մը թափը կոտրելու համար և կամ, աւելի յաճախ, առողջ մարդիկ պատուաստելու համար որոշ հիւանդութեամբ մը վարակման դէմ: Օրկ. մկնոռը (suroncle, գան չիպամը) ճեղքելով հանդերձ, պէտք է անոր թարախով պատուաստ պատրաստել և ներարկել՝ թէ՛ մանրէին ուժը «կոտրելու» և թէ նոր միքրոպաներու երեւումը կանխելու համար: Միւս կողմէ, կեղծմաշկի մանրէով պատրաստուած պատուաստը կը ծառայէ ախտազերծութիւն (inflammation) առաջ բերելու առողջ մանուկներուն մէջ, որպէսզի կեղծմաշկէ չըռնուին: Նոյնը՝ ժանտատնդին և կարգ մը ուրիշ հիւանդութիւններու համար:

Դալով շիճուկներուն, անոնք ոչ թէ հականիւթեր յառաջ կը բերեն, այլ իրենք կը պարունակեն պէտք եղած հականիւթերը, հետեւաբար անմիջապէս, բայց ժամանակաւոր կերպով, օգնութեան կուգան մարմինն: Օրկ. ձիու մը կը ներարկեն կեղծմաշկի մանրէն քանի մը անգամ, մինչեւ որ ձիուն արիւնը պէտք եղած հականիւթը պատրաստէ և ի վիճակի ըլլայ գիմազրելու կեղծմաշկի զօրաւոր մանրէներուն:

Այդ արդիւնքը ստանալէ վերջ, կ'առնեն ախտազերծ ձիուն-արիւնը, շիշերու մէջ կը գնեն և պատրաստ կը պահեն ներարկելու համար կեղծմաշկէ բռնուած երախաններուն: Նոյնը կ'ընեն կարկամախտի (tetanos) և փոտախտի (gangrene) դէմ, որոնց շիճուկները լայն չափով կը գործածուին վիրաբուժութեան մէջ:

Շատ մը պատուաստներ եւս մեծ ծառայութիւն կը մատուցանեն վիրաբոյժին, գործողութենէ մը առաջ կամ վերջ, այդ գործողութեան տեղի տուող հիւանդութեան միքրոպին ազգեցութիւնը տկարացնելու համար:

ԲԺ. ԱՐՄ. ՄԻՐՈՒՆԵԱՆ

ԵՆՉԱՌՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԱՌՈՂ ՄԵՔԵՆԱՑՑ ՄԸ. — Վիեննայի դատական — բժշկութեան ինստիտիւտի մէջ թժ. էնզեցմինկեր փորձեր ը-րած է իր նոր մեքենայով. որու չնորիիւ շատ յաջողութեամբ ինարաւոր կ'ըլլայ ջուրի մէջ եւ այլ կերպով բոլոր խեղդուածները եւ շնչահեղծները կենդանացնել՝ ենթարկելով արուեստական շնչառութեան, վերջերս կին մը, որ ինկած էր տան մը երրորդ յարկէն, անշունչ վիժակի մէջ բերուած էր ինստիտիւտ. 5—6 ժամ վերջ թժ. էն-զեցմինկերը փորձեց իր գործիքը, կէս ժամուան ջանքերէ ետք դիակը սկսաւ կեանքի նշաններ ցոյց տալ, սիրտը վերսկսաւ զարնել, վէրքերը արիւնոտիլ եւլն: Թէեւ ինարաւոր չէ եղած կինը փրկել, բայց փորձը ցոյց է տուած է որ այդ մեքենայի միջոցով (որի շարժիչը ելեքտրական ուժ է) ինարաւոր է սրտի աշխատանքը վերահաստատել, նոյն իսկ մահէ քանի մը ժամ՝ վերջը,